

ԻՐԱՎՈՒՆԿ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՅԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԵՆ ՉՈՐԵՔՇՈՒԹԻ ԵՒ ՆԱ ԱԹ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ


Պոլսի համար Տարեկան 12 ֆր.
» » Վեցամսեայ 6 ֆր.
Արտասահմանի համար (երկու փոքր մեկ
ծարձ) Տարեկան 14. Վեցամսեայ 7 ֆր.
ԿԱՆԻՒԻ ՎՃԱՐՆԵԼԻ

Նախակ դրամ եռայլն դրկել հետեւեալ հասցեով

ԽՐԱԳՐՈՒԹԻՒՆ «ԻՐԱՎՈՒՆԿ» ԼՐԱԳՐՈՅ. — Վ.Ս.Ռ.Ն.Ա. (Պուլկարիա)
Редация на ВѢСТНИКЪ
„И р а в у н к ъ“
ВАРНА (България)

Rédaction du journal
„I r a v o u n k“
V A R N A (Bulgarie)

Rev. Père G. Kalémkariac, Meehitaristeng-see
N° 4 Vienne



ՕՐՄԱՆԵԱՆ ԵՒ ՍՈՒԼԹԱՆ

Բոլոր Հայոց ուշադրութիւնը
գրաւած է այսօր Օրմանեանի հը-
րաժարականը և ամեն ոք անհա-
մար կ'սպասէ անոր հետեւութեա-
նը, որ առաւել կամ նուազ հայ
ժողովրդեան օգտակար պիտի ըլ-
լայ:

Արդէն մինչեւ ցարգ փորձը
ցոյց տուած է թէ Պատրիարքնե-
րու պատճառարարներու հրաժարա-
կանները միշտ իրենց օգուտները
ունեցած են. իսկ քծնումները,
Սուլթանին շուրջուած շողոր-
թութիւնները, առանց բացառու-
թեան, հակառակ արգիւնք տուած
են, որովհետեւ արդի Սուլթանը
անուշ լեզուէն չի հասկնար, զինքը
որչափ շողորթեան այնչափ խըս-
տաբարոյ դիրք մը կաննէ:

Օրմանեան այժմ համազուած
կ'երևայ այդ ճշմարտութեան.
մինչդեռ պէտք էր իր Պատրի-
արքութիւնը ստանձնած օրէն այդ
համազուած ունենալ. բայց կը
կարծենք թէ Յարութիւն փաշա-
նի մեղաւորը չլինելը դիւթեցին
Օրմանեանը թող ու քծնող քա-
ղաքականութեան մը հետեւելու
հանգէպ Սուլթանի. և մինչև իսկ
զանի մըցին ինչէն Դիտպանա-
ժողովին տալ այն տխրահուշակ
հեռագիրը, զոր տալէ առաջ Օր-
մանեան կարող էր Սուլթանէն
կարգ մը զիջողութիւններ ձեռք
բերել և ըստ այնմ հեռագրել.
բայց Տատեան այդ խնդրին մէջ
աւելի արտաքին գործոց նախա-
բարի խորհրդակցանի մը դերը կա-
տարել ուզեց քան թէ Հայոց վար-
չական ժողովոյ ատենապետի. այդ
հեռագիր որչափ գէշ սպաւորու-
թիւն գործեց հայ ժողովրդի վը-
րայ, նոյնչափ ազդեց այդ ժողո-
վրդի բողոքը Օրմանեանի սրտին
ու խղճին. բողոքը արտասահմա-
նի մէջ միահամուռ էր արգէն, իսկ
ճաճաւատանի ամեն անկիւններէն
տառապող, հարստահարուող ժո-
ղովրդի աղիւսարչ ազազակներն
ալ եկան միացան այդ բողոքի
ձայներուն հետ և կրցին վերջապէս
սխալեցնել Օրմանեանը, որ տե-

սաւ թէ իր քայլերը հոսած են
այլ եւս գահալէժի մը եզերքը որ
իրեն և ժողովրդին կորուստ կըս-
պանայ: Յանկարծ Օրմանեան
սարսուռ ու քայլ մը ետ քաշուե-
լով ինքնամիտ մտածեց թէ՛ սխալ
ուղիի մը կը հետեւէր, իր ապաս-
տանած ճիւղը զինքը խորխորատ
կ'առաջնորդէր. ուստի շողորթի
մը դիմակը վառ առնելով իր քա-
ղաքականութիւնը վերստացաւ, ու
դիմեց ուղղակի Սուլթանին Պատ-
րիարքի մը վայել կորուկ բանա-
ձեւով մը. «կամեր իրաւունքները
մեզ վերադարձո՛ւր և կամ իմ հը-
րաժարականն ընդունէ՛ք» ըսելով:

Սուլթանը զգաց թէ այս սպառ-
նալիքին հետեւանքը ծանրակշիռ
կրնայ ըլլալ. այնպէս որ Հայոց
Պատրիարքին այս դժգոհութեան
ցոյցը հայկական խնդրոյ վերա-
ծարձումին և դեպքանատանց դի-
մումներու առիթ կրնար տալ.
ուստի այս անգամ Սուլթանը ջա-
նադիր կ'ըլլայ խնդրը անուշ տե-
ղը կապելու: Անմիջապէս Երևոյ-
նի մէջ մասնախումբ մը կը կազմէ
Հայոց Պատրիարքին պահանջները
քննելու պաշտօնով. և միւս կող-
մէ անուղղակի միջոցներով կը ջա-
նայ հանդարտեցնել Օրմանեանի
միտքը յսուալով թէ պիտի կրնայ
կրկին ըստ առաջնոյն դիւթել ա-
նոր յուզուած սիրտը: Բայց Օր-
մանեան իր հիւանդութիւնը պատ-
ճառ բռնելով Պատրիարքարան չի
իջներ, որով ցոյց տալ կուզէ թէ
իր դժգոհութիւնը չէ դադրած
չոր խստութիւնով:

Այս ձգտեալ քաղաքականու-
թիւնը գրեթէ մէկ ու կէս ամիսէ
ի վեր կը շարունակուէր Սուլթանի
և Օրմանեանի միջեւ. թէեւ իս-
կապէս հրաժարական մը գոյու-
թիւն չունէր, բայց հրաժարելու
սպառնալիքը նոյն աստիճան ազ-
դեցութիւն կրնէր Երևոյնի ու
դեպքանատանց վրայ:

Ահա իրաց այս վիճակին մէջ
վրայ կը հասնին ձերբակալու-
թեանց և հարստահարութեանց
նորանոր դէպքեր, որոնց հանգէպ
Օրմանեան կը վճռէ իր վերջնա-
կան հրաժարականը տալ. Սուլ-
թանը այս անգամ կը տեսնէ թէ

Հայոց Պատրիարքը ոչ թէ ազեր-
սարկուի մը այլ պահանջատիրոջ
մը դիրք կաննէ իր դէմ: Կըզգայ
թէ այս անգամ անուշ լեզուով
խօսելու կարգը իրն է, ուստի
յամառ պահանջողին առջեւ քիչ
տալ ու շատ աղաչելու, կամ սա-
կարկութեան մտնելու ուղղութիւնը
կը բռնէ. այժմ 5 փոքրիկ խոստում
ներ եղած են Սուլթանէն. Օրմանեան
զանոնք բաւական նկատելի չուզեր.
Յարութիւն բաշա միջնորդի դերը
կը կատարէ: Տեսնենք համաձայ-
նութիւնը որ կէտին կը հասնի:
Բայց ինչպէս մինչև ցարգ փոր-
ձերը ցոյց տուած են, համաձայ-
նութիւնը Հայոց այնչափ նպաս-
տաւոր պիտ' ըլլայ որչափ Օրման-
եան հաստատակամ պիտէ ժողովր-
դի իրական պէտքերուն գոհացման
կամ իր հրաժարականին վրայ:

Յ. Գ.

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆ

Յիշխիպէ, 4 հոկտ. 99

Ըստ մասնաւոր ազգարարու-
թեան Շարժումի, կիրակի հոկտ.
3 տեղւոյս Դրօշակեանները հոգի-
հանգստեան պաշտօն կատարել
տուին, կարնոյ մէջ կախաղան
բարձրացող Արամ Արամեանի հա-
մար:

Ներկայ էր խուռն բազմութիւն
մը. նոյնպէս թաղ. խորհրդոյ և
Հոգաբարձութեան Պատ. անդամք
իրենց ներկայութեամբ պատուե-
ցին ու յարգեցին հանգուցելոյն
յիշատակը:

Ի հարկէ մեր անհրաժեշտ պար-
տականութիւնն է մեր ազատու-
թեան համար նահատակուող հե-
րոսներուն գեթ յիշատակը տօնել
և անոնց անունները քանդակել
մեր որտի էջերուն վրայ, որով ա-
նոնց հոգիները պիտի հրճուին յեր-
կինս, միխթարուն և ըսեն մե-
զի. — «Գիտցէք թէ դեռ կենդանի
ենք»:

Բայց ինչո՞ւ խտրութիւն դնել
և ինչո՞ւ կուսակցական ոգով վե-
րաբերել նահատակներու հոգիներ-
ուն հետ իսկ:

Շուրջ քառասուն տարուան մի
գործիչ և ամբողջ հայութեան ծա-
նօթ մի անձնաւորութիւն էր որ

մեռաւ և որոյ հոգւոյն համար ոչ
թէ պաշտօն, պատարագ այլ
«Հայր մեր» մը իսկ չըսուելէ ի
զատ, գտնուեցան այնպիսի պիղծ
բերաններ ալ որ անամօթաբար
հայհոյեցին իրեն հոգւոյն:

Ինչ էր Պ. Չաքրեանի յանցան-
քը, միթէ ան ալ միեւնոյն եկե-
ղեցւոյ հարազատն, միեւնոյն նա-
հատակն, միեւնոյն հերոսն պէտք
չէ՞ համարել, որ իր նիւթական,
բարոյական և ֆիզիքական բոլոր
ուժերը սպառեց ազգին համար և
հուկ յետոյ թշուառ վիճակի մէջ
մեռաւ:

Նա կը գործէր այն ժամանակ
երբ մեր ինտելիգենտ պարոնները
դեռ լոյս աշխարհ տեսած չէին:

Ինչ էր ըսինք յանցանքը. վա-
նալի չէր «ինոցանէ»:

Արդ կը խնդրենք տեղւոյս պատ-
թաղ. խորհուրդէն որ ի դիմաց
ժողովրդեան Հոգեհանգստեան պաշ-
տօն մը եւս կատարել տայ Պ. Յ.
Չաքրեանի, այդ հանրաժանօթ և
բազմամեայ գործիչին համար, առ
ինչան երախտագիտութեան:

Եւ տեսնենք նոյն օրը պիտի
զիջանին Դրօշակեանք գալու եւ
պատուելու յիշատակը այն մար-
դուն, որ իրենց ծրագրին հիմնո-
վին հակառակ էր:

Թէեւ չենք յուսար:

Երկու խօսք ալ տեղւոյս եկե-
ղեցւոյ պաշտօնէից մասին:

Միեւնոյն օրը եկեղեցին կ'զբո-
նուէր և տեսայ որ Սրբազան աս-
մունքները կը կրճատուէին. քա-
հանան Աստուծոյ կրճատեց, տի-
րացու վարժապետը Նորաստեղ-
ծեալին մէկ տունէն մինչեւ վեր-
ջին տունը թռաւ: Վերջապէս կըր
ճատումն ի վերայ կրճատման:
Չենք գիտեր ուրկից թելադրուած
էին այդ օրը այդպէս ընելու:

Պատկապէս կը խնդրենք տեղ-
ւոյս Պատ. Հոգաբարձութիւնէն եւ
այս մասին կաղաչենք նոյն իսկ,
որ աշխատին դպրոցին մէջ կրօնա-
կան դասերը իրենց յարմար տեղը
դնել տալ. կրօնական դասեր, որ,
լինին համաձայն Հայաստանեաց Ս.
Եկեղեցւոյ օրինաց և վարդապե-
տութեան:

ԴԻՏՈՂ

ԸՆԿՆՈՒԹԵԱՆ ՄԵՍԱԳՈՅՆ ԱՂԵՏԸ

(Շարունակութիւն 75 քիւնէ)

Հոգեկան այս վիճակին մէջ, ուր բոլոր խաղացողներ կը գըտնուին սեղանին շուրջը, գերին՝ ինքզինք հաւատարմապատիւ կ'ըզայ իր տիրոջ: Ամեն հեղինակութիւն կը մնան հոն և դրապէս կը նշուիրագործուին պարզ զինուորի մը յոխորդանքը իր թագակիր վեհապետին ու զաւակի մը ըմբոստութիւնը՝ իր հօրը գէտ: Նշուիրական դասակարգութիւններ, ընկերական կարգ ու սարգեր Ռուսիայի զէնքին քով զիստ մըն ալ չ'են արժեք, քանի որ վեհապետներու վեհապետն է, որ կը թագաւորէ հոն, զեղին մետաղը, ուրին առջեւ ծանգ կը չոքին ինչպէս իշխանը, այնպէս և ստրուկը, միեւնոյն ևսանդով ու միեւնոյն ծակ աչքով:

Այս դրութեան մէջ խելքը չ'է, որ կը կառավարէ մարդը: Խելք, զգացում ամեն ազնիւ ինչ տեղի կուտան այն կրքին առջեւ, զոր կը ներշնչէ խաղալու սոսկալի մութիւնը: Սեղանին վրայ մարդը հոգեբաններու քննութեան արժանի, տեսակ մը մոլեգնած գաղան է, որ ինքզինքը կուտէ:

Եւ իրաւ կուտէ:

Մտիկ ընենք քանի մը նամակները, զորս իրենց ժամանակին ստացած ու խնամով պահած եմ օր մը հրատարակելով զանոնք զգուշացնելու համար մեր ազգականները, որոնք դժբաղդաբար վերջին ազգային ձախողումներէ յետոյ աշխարհի չորս կողմը ցիրուցան եղած շատ անգամ գաղթականութեան երեսէն իրենց կըրած վնասներուն դարձանը գտնեալ սին երազով դիմած են ու տակաւին կը դիմեն Մօնթէքոուլօի այդ հռչակաւոր ճահճատունը:

10/22 հոկտ. 96 Մօնթէքոուլօ

Անցած օր գրած էի ձեզ Ռուս իշխանի մը մասին: Երէկ ժամ

5ին տեսները ծանր հարուած մը կրեց «թռանթ է քառանթ» ին վրայ, քիչ մնաց հեռանալը աղետաբեր պիտի ըլլար իշխանական տան համար:

Երիտասարդ իշխանը՝ իր թեւը ունենալով համակրելի իշխանութիւն ժամը 4ի տեսները խաղի սրտէն մտաւ: Իշխանութիւն մանի շակագոյն շրջագոյն մը վրայէն կապալտ թիկնոց մը առած էր, ամեն օրուրէն աւելի պարզ հագուած էր, բայց պէտք է խոստովանիլ, որ ամեն օրուրէն սիրուն էր:

Սեղանին մօտեցաւ թէ չ'է, իշխանը տրցակ մը թուղթ Դիանայ կարմիրին, 13000 ֆրանք. բազմը յաջող չը գնաց ու սեւը վաստակեցաւ: «Ռուս», կանչեց նորէն ու 12000 ֆրանք եւս նետեց կարմիրին: Միեւնոյն դժբաղդութիւնը պատահեցաւ:

Այս, յամուութիւնը գէշ բան է: Ուրի վայրկեանի մէջ եօթներորդ 12000 ֆրանքնոցն էր, որ կը կորսնցունէր իշխանը սրտի կատարեալ հանգարտութեամբ: Երկար զրպանէն չէք մը հանեց, ստորագրեց և «էնսքէթէօն» ին տուաւ որ տեղի ընէ: Չէք կէս միլիոնոց էր: Երեք քառորդ ժամ չը քշեց «էնսքէթէօն» պղտիկ թուղթի մը վրայ հաշիւը ներկանց իշխանին: Կէս միլիոնը կորսուած էր: Թղթապանակէն երկրորդ մըն ալ հանեց տեղի ըրաւ ու ինք ձեռքերը խաշածեւ կուրծքին վրայ ծալած, շարունակեց իր խաղիւրդ ազգարարել: Ժամը 7ին տեսները «էնսքէթէօն» ը միեւնոյն տխուր պարտականութիւնը կատարեց իշխանին մօտ, որ շարունակեց կատաղօրէն չը գիտեմ մինչեւ ժամը քանիսն:

Մէյ մըն ալ յանկարծ ժամը 11ի մօտեցած իշխանութիւն ճիշդ խեցինք ու տեսներ որ իշխանը անյայտացիր է: Ես ու Մանչէսթէրի Հայ վաճառականներէն Պ. Յ. Տ. իշխանութիւն հանգարտեցուցինք, ազաչելով, որ մեզ հետեւի

անմիջապէս: Գիտէինք թէ այդ կարգի դժբախտներ ուր կըրթան ընդհանրապէս գործադրելու իրենց սեւ որոշումը: Այնթարթի մէջ պարտէզին այն տեղը հասանք, ուր վայրի եղնիկներ կը պահուին: Այդ տեղը՝ ի հարկէ մասնաւոր հաշիւներով, մութ ձգուած է. ոչ կըբերական լոյս կայ և ոչ ալ օդային կազ: Մարդ կրնայ հոն կուշտ կուշտ լալ ու կուշտ կուշտ սիրաբանիլ: Մութ անկիւնի մը մէջ յաղթանդամ ընկերս սկսեց շուքի մը հետ խուլ ու անշուկ կուր մղել ու վերջապէս յաջողեցաւ իջնալէսը խելի ձեռքէն: Երտակը ես կը վախնայի կապալտի մը զոհ գնալէն ու իշխանութիւն քովը սրտատրոփ կ'ապասէ ընկերոջս մղած մարդասիրական կուռոյ ելքին: Ընկերս վերջապէս հեւալով եկաւ աղաչել իշխանութիւն, որ փրկէ իր ամուսին վատահայեանով զինքը, որ անգէն է իշխանը:

Այդ դեռատի, լուսնկայ իշխանութիւն երբ իշխանին ստեղծը պլուած արցունքով կը թրջէր գետինը, մենք արդէն սրտեքնիս կտոր կտոր եղած, կը հեռանայինք այդ մահաշուք վայրէն, անէքներ կարգաւոր խաղին ալ խաղարանին ալ:

Բարեկամ, սոսկալի է Մօնթէքոուլօն: Երանի՛ տնոր, որ բնաւ տեսած չ'է զայն:

17/29 հոկտ.

Ամեն անգամ որ Մօնթէքոուլօն գրեմ, չ'եմ կարծեր թէ պայգոյն պաշտօնէն տարբեր դեր մը կատարեմ: Մարդ ուզէ չ'ուզէ լալկան կը դառնայ հոս: Վասնզի գրեթէ ամեն րոպէ լալու բաներ կը պատահին: Գիտես, ինչ եղաւ այսօր:

Ա. Մարքիզը կ'ըսէին թէ միշտ բաղդաւոր եղած է խաղալու մէջ, որքան անբաղդ սիրոյ մէջ՝ իր մատակարար կնոջ՝ ուրիշներու շուայլած խանդավառ դարպասներէն վերին աստիճանի զայրացած, բա-

նի մը օրէ ի վեր հետամուտ եղած էր կրակաբոց Սպանուհիի մը պատին տիրանալով, վրէժ չուծելով: Կէ՛, Հրաչ Սպանուհին՝ արդէն ծանօթ իրիւս արտակարգ վճուղի մը խելք չ'էր թողուցած խեղճ Մարքիզին գլուխը: Պահանջկոտ էր ան, կին-տղուկ մը, որուն պէտք եղած արեան պաշարը հայթաթ թելու համար շատ պարարտ քան մը Ռոչիլտինը պէտք էր:

Խեղճը շաբաթէ մը ի վիճակէ կած էր տնոր ծուղակը ու կորսնցուցած մտքի, խելքի ամեն հաւատարկութիւն: Չինք մը տէն ճանչցողներ կ'ըսեն թէ երբ օրէ ոտքին յիմարութեան նշաններ կը տեսնուէին արդէն իր վերայ վասնզի հիմայ փոխուած ին հանգամանքները: Սիրոյ մի առեւիտոյթս, բազդաւոր, բայց խաղալու մէջ իսկապէս դժբաղդ եղած էր: Մեծ կորուստներ տուած էր:

Երեկ վերջին օրը ըլլալով, «թռանթ է քառանթ» ին վրայ ուրիշ հարկի հաշուր ֆրանք ալ կորսնցուց մինչեւ յետին սուն ուստի զանին վրայէն աներեւութացաւ: Քիչ վերջ շուկ մը, տարօրինակ իրարանցում մը տիրեց «Յիւսուս» ին մէջ:

Աստուած իմ, ինչ տեսնել: Կանանց արդուպարզի բաժնէ շալկելով դուրս հանեցին Մարքիզը անճանաչ վիճակի մէջ: Այնքերը գրեթէ գունկին միւս կողմը տեղափոխուած, բերանը մինչեւ ականջները վեր ելած, ոտքերը փորը քաշուած, թեւերը պըռճեւ կուկուր աստիճան ձգուած, թէ վոլվէրը ձեռքին մէջ, բլթակը միսը մտած արիւնլուայ ճիւղի մը երկնայթիւ առած էր խեղճը: Ելմորած վիճակի մէջ հոն մտեր է գնդակով մը իր տառապած կեանքին վերջ տալու համար, բայց ափսոս, որ րոպէական կաթնած մը վրայ հասնելով, չ'է կրցեր իր որոշումը գործադրել:

Հէ՛գ Մարքիզ, օր մը քաջքնեց այդ հրէշային կեանքը ու այսօր

ԲՈՒՆՈՒԹԵԱՆ ՏԱԿ (50)

ԺԱՄԱՆԱԿԱԿԱՅ ԱՅՅ ԿԵԱՆՔԷ ՊԱՏԿԵՐ ՄԵ

ՄԱՍՆ Բ.

Իրբեւ հետաքրքրական մանրամասնութիւն կրենք որ Ռուսական կառավարութեան էջմիածնի մէջ ան տեսն ըրած բռնաբարութիւններուն երգուեալ հակառակորդն էր: Իր Ռուս կառավարութեան նկատմամբ ունեցած կատաղի ատելութիւնը անանկ համեմատութիւն մը առած էր մէջը որ անգամ մը միայն պատարագեց էջմիածնի այնպիսի միջոցի մը մէջ որ Զարին յիշատակութիւնը չըրաւ պատարագի մէջ: Վահրամ Վառնա էր եւր լրագրիւնբու մէջ կարգաւորէն տուալ իմացաւ Մըկրտիչ Տէրուհեանի կաթողիկոսի կողմէ Ռուսիանոյ եւ Պուլկարիոյ թիւեւրոն այցելու հովիւ կարգուելու ան-

կից ստացած նամակներէն:

Մկրտիչ վարդապետ Ռուսման կառավարութեան ստիպմամբ պարտաւորեցաւ ձգել Ռուսմանիան, ամենուրեք յայտնի իրողութիւն մըն է որ անոր արտաքուստեւն մէջ Պուլկարի Օսմանեան դեսպանին մատը կար: Դժբաղդ Տէրուհեանի գլխուն չատ վերէն իջած այս հարուած շատ յուզեց Վահրամը: ասոր վրայ Մկրտիչ վարդապետ Պուլկարիա անցաւ: հոն տը տարրերի կերպով հալածուեցաւ խեղճը: Իր մեր մէջ ժամանած միջոցին ահապին ժողովրդականութիւնը և հեղինակութիւն վայելող կուսակցապետ մը անոր ունեցած ազդեցութիւնը ջախջախելու համար անմիջապէս Ռ. քաղաքի մասնաճիւղի միջոցով շրջաբերականներ ցրուել տուաւ ամեն տեղ վատ մը եւ խաչազող մը նեկայացնելով զայն:

Վահրամի ձեռքը անցան այդ շրջաբերականներէն, զայրոյթէն ակնցին բորբոքեցաւ, իր շատ մօտէն ճանչցած

արեւակցին մասին եղած այդ անորդանքը լուին կու տալու ստիպուեցաւ այն ատենի փոքր կուսակցական հզօր հովին առջեւ ինքզինքը տկար զգալով:

Միլիտարէ, Ռուսմուգ, Եուսէն այցելելէ ետք վաղամեռիկ Տէրուհեանը անցաւ Վառնա: հոն գրկախառնեցան երկու սրտակիցները հինգ տարիէ աւելի բաժանուեց ետքը: Որքան փոխուած էին երկուքն ալ: Հին Լիւնը որքան տարբերած էր, լրջութեան շրջափոխութիւնը ունեցած էր:

«Եստ կծու ժամանակի մէջ ման կըգաս, ըսաւ անոր Վահրամ:

— Կըմբռնեմ եղբայրս, պատասխանեց վարդապետը, հարկը այսպէս պահանջեց եւս տեղի տուի: Էջմիածնի մէջ մնալը բերդարգելութեան դատապարտութիւն աւելի ծանր էր ինձ համար:

— Հակառակը կը կարծէի:

— Մայր աթոռը մօտէն չուսումնասիրող ամեն հայ ալ քեզ պէս կը մտածէ:

բայց հոն փչող խորշակ շուշը ապականած է ամեն բան: Հոն անդի Միւսաբանութիւնը իր դրպանը եւ ստամոքսը միայն կը ճանչնայ ամեն տեսակ անբարոյականութեան մէջ թաղուած զգայունները եւ ճշմարիտ կրօնաւորները աչքի փուչ են: Քիչ մը առաջ խորշակ շուշի մը մասին ակնարկեցի: Զարին շուշն է ան, որու հաւատարիմ դիտող աչքը, պրուկուրօրը անմիջապէս կը նկատէ եւ կը մաքրէ զայն: — Բայց հայրիկը գէթ միաբանները չկրնար ճամբուս բերել:

— Վահրամ, մանաւանդ հիմա, էջմիածնի մէջ կաթողիկոսը անուանական պետ մըն է: անոր ազդեցութիւնը ոչինչի մօտ բան մըն է: Ռուս կառավարութիւնը զայն փոքրկուցնելու համար անցիւղին մէջ տոյթ չ'է փախցուցած եւ չի փախցնել իմայ ալ:

— Իմացածիս նայելով Մատթէոս եւ Գեորգ կաթողիկոսներ իրենց արժանապատուութիւնը գիտցած են պահել:

մեռաւ Նիսի հիւանդանոցին մէջ :
իր թաղումին , որուն գոցեր է-
ինք և մենք , Սպանուհին ներկայ
չէր . իր կինը միայն ապաշաւի
արցունքներովը կը թրջէր անոր
ցուրտ դիակը . . .
(Շարունակելի)

ՉՊԱՆԵԱՆ ԵՒ ԳԱԼՅԱՅԵԱՆ

Ժամանակէ մը ի վեր Բարիզա-
րնակ հայ գերաւանի մը , Գալ-
ֆայեանի խնդիր մը կը շրջի լը-
բագրական հրապարակին վրայ ,
ահագին աղմուկ հանելով , գրիթէ
թոհուրոհ մը ստեղծելով ան-
պիսի միջոցներով մը , ուր ան-
նականութիւններ կը նահանգն
պատկերներ կը ստեղծեն և արժա-
նիքներ կը կոխտուեն :

Իբրեւ ժողովուրդի պարզ ան-
հատ մը , հետաքրքիր ամեն իրո-
ղութիւններու որոնք ազգային ար-
ժանապատուութիւնը ոտնակոխ Ը-
նելու կը սպառնան , հետեւեցայ
այս խնդրին ու անոր մուծ ման-
ուածներուն մէջ կորսուեցայ , Գալ-
ֆայեանի գեղասան է եղիւ , նոյն
խիտ տաղանդաւոր գերասան մը
ինչպէս կըսեն իրեն հիացողները :
Իրաւ է որ այս բանը վերջնա-
կանապէս չհաստատուեցաւ . թեր
ու դէմ գրուածքներու անհատնում
չարք դեռ վերջացած չէ : Անոնք
որ կոկողպիզ կը պոռպոռան այս
հայ արուեստագէտին տաղանդին
հաշակումը , դեռ անհերքելի պո-
ծանք կերպով չկրցան ապացուցա-
նել թէ հայ առթիւսթը իրաւ
յայտարարուած արժանիքը ունի .
իրաւ է . Պոլսոյ մէջ փայլուն առ-
աջ մըն էր , ու թրքական հա-
րստահարութիւնը հեռացուցած էր
զայն իր բնավայրէն :

Պահ մը կ'ենթադրեմ նոյն իսկ
թէ ասոնք ամեն տարակոյսէ վեր
բաներ եղած ըլլան , բայց ամենե-
ւին չեմ հաշտուիր , և ինծի հետ
ժողովրդի լըջամիտ անհատները չը
պիտի հաշտուին բոլոր այն արիւ-
նացայտ զրպարտութեանց հետ ,
զորս Շարժումի 1576-րորդ թիւին
մէջ Բարիզէն վահագն ստորագրու-

թեամբ թղթակցութիւն մը կը
ժայթքեցնէր Անանիոսի խմբագր-
րապետ Չապանեանի դէմ :
Ինչ բիրտ ու յախուռն բան է
րսել թէ Չապանեան մուրացկան
մըն է , իր թերթին համարները
ձեռքը կը ներկայանայ առոր անոր
ձախելու համար , խնդրեմ ըսէք ,
մուրացկանութիւն կըլլայ եթէ ո
եւ է մէկը իր թերթին բաժանորդ
գրելու հետամտի :

Ինչ աւելի փցուն խօսք ըսել
թէ Չապանեան կ'անուանարկէ
Գալֆայեանը՝ որպէս զի հա-
րուստներուն անոր յատկացուցած
նպաստը ինք առնէ . Բարիզի հա-
րուստները ապուշ են ուրեմն .
չինչ գիտեր թէ որի նպատակ տա-
լու են , և ինչ տեսակ արժանիքի
Համալսարան հանդէսին վրասելու
համար , Ուսանողաց Միութեան
ռէքլամը կը դնէ եղբի իր թերթին
մէջ : Դուք ինչ կը խառնուիք ան-
նական համակրութիւններու . Չո-
պանեանի Համալսարանին չի հա-
մակիրը և ուրիշին կը համակիր .
նայինք Համալսարանին մարդի-
կը կը համակիրին Չապանեանի , եւ
եթէ չհամակիրին՝ յանցաւոր են :
Բայց ձեռք զրպարտութիւնը
թէ Չապանեան Նուպար փաշային
կնոյ գլխութիւնը իր վրայ հրաւի-
րելու համար փաշայն կոտորուածա-
ցնէ » լսողին ու կարգացողին ծի-
ծաղը կը շարժէ :

Սուլթանին կենացը բաժակ
պարպեր է Չապանեան , ո՛ւր բա-
րեկամ . ո՛ւր եւ երբ , կը հաճիք
ըսել մեզ :

Ասոնք են Չապանեանի դէմ ե-
ղած կշտամբանքները , ամենքն
ալ իրարմէ ողորմելի , իրարմէ ան
հիմն ու անիմաստ :

Հիմալ գանք բուն խնդրին եւ
թողուցնք Չապանեանը :

Գալֆայեանը խաչագող մը՝
խաբեբա՞յ . մըն է թէ ոչ : Եթէ չէ
ու դուք անհերքելի փաստերով
հաստատէք զայն , շնորհակալ պի-
տի ըլլանք ձեզ , բայց եթէ չկա-
րենաք արգարտցնել , դիտցած ըլ-
լաք որ ժողովուրդը միշտ գոհ
և ուրախ պիտի ըլլայ , երբ Չո-
պանեան և ուրիշներ ազգային ար-
ժանապատուութիւնը չվտանգելու
համար անխնայ հարուածեն ամեն
կարգի խաչագողներն ու ազգին
պատուոյն հետ խաղացողները :

ՅԱՐՈՒԹԻՒՆ ԽԱՉԱԳՈՂՆԵՐ
Վառնա

Իրեն եւ անիկայ տեղի պիտի տայ :
« Ինչ վնաս ունի սո սղայ , պա-
տախտանց Որիմեան :

« Պրօկուրօրին առաջարկը սըրբա-
պղծութիւն մըն է Ձեր կաթողիկոսա-
կան անրոնաբարելի իրաւունքին դէմ :

« Ինչ կուզէ թող ըլլայ :

« Կր պաղատիմ հայրիկ , Ձեր այս
բայը իրաւունք պիտի տայ նորանոր
ոտնձգութիւններ փորձելու :

« Երկար այլելուեա մտկ ընելու
ժամանակ չունիմ պատասխանից Ու-
րիմեան : »

« Վահրամ ալ գնա հասկցիր ուր գա-
ցած են գործերը » :

Երկու գաղափարակիցները ազգի կա-
ցութեան վրայ դարձուցին խօսակցու-
թիւնը . գիշերը լուսնոցն էր : Վահրամ
ինչպէս տեսնուեցաւ մեր վերը յիշատա-
կած խօսակցութեան սկիզբը ժամանա-
կի փափկութեան մասին սկիսարկու-
թիւն մը ըրած էր . այդ բանը անգամ
մըն ալ երկրորդելով , ըսաւ որ իր լոկ

ԼՐԱՔԱՂ

—)o(—

Թ. վրիզէն օգոստ. 21 թիւով « Ձայն
Հայրենեաց »-ի հետեւեալը կը գրեն .

Սալմաստի խռովութիւնները ,
վարդան գիւղում կատարուած
սպանութիւնները և Շարաֆ պէկի
Սալմաստի վրայ արշաւելու լուրը ,
հաղորդել էի ձեզ : Այժմ Սալմաս-
տում շատ աւելի խառնակ վի-
ճակ է տիրում : Սահմանին մօտիկ
հայ գիւղերի բնակիչները վար-
դան գիւղի սպանութիւններից
սարսափահար եղած , թողել են
իրենց տունն ու տեղը և քաշուել
կեդրոնական հայաշատ գիւղերը :

Մի քանի օր առաջ լուր հա-
սու թէ՝ Սալմաստի կառավարիչ
Նիզամ Սալթանէն երեք հարիւր
ձիաւոր սարկազներով շրջապատել
է Ղալասար գիւղը . սոսկալի ան-
գլխութիւններ են գործուել , սպա-
նուել են երկու հոգի և վիրաւոր-
ուել մի քանիներ , և որպէս թէ
այս խժեղութեանց առիթ տուել
է 40 զաւախների Սալմաստ մըտ-
նելը : Ղալասարի հայերը հեռագ-
րատուն լիցուած՝ Ալմատեան Սըր-
բաղանին դիմեցին , Եպիսկոպոսը
շուտով կը պատրաստուի մեկնե-
լու Սալմաստ : Սպասում ենք ա-
ւելի մանրամասնութեանց , որ խոս-
տանում են հաղորդել ձեզ :

—Ամիրկայի Լովէլ քաղաքէն
կը գրեն , — « Հոս առաջ 7-10 հո-
գի էին միայն բաղդախաղի մո-
լութեան ախտով բռնուող հայերը .
այժմ 40-50 մարդերու վոհմակ
մը կը կազմեն : Սեպտ. 16ի չա-
բաթ գիշերէն մինչեւ երկու շաբ-
թի առաւօտ ապականութեան և
անկման տեսարան մը կար հոս ,
45 հոգի թօմօն փողոցին թուր-
քերու բնակարանին մէջ , 3000
տղար առջեւին դրած , ծխախո-
տի ծուխ ու մուխի գուլաներու ,
հայհոյանքներու տողատարափի
մէջ թաղուած , ոգելից ըմպելի-
ներու շիշներով շրջապատուած ,
առանց վայրկեան մը անգամ հտն-
գստանալու , գիշերը ցորեկին խառ-
նած կը խաղային , կը վատէին ,

կը կողոպտէին զիրար :

Կ'իմանա՞ք թէ բարերախտա-
բար տեղական կառավարութիւնը
սկսած է հալածել խաղամոլները ,
որոնցմէ 10ը ձերբակալած է :

—Ամիրկայի իրենց հայրենիքը
դառնալ ուղով 14 հայի Յունաս-
տանի Բիրէ քաղաքը հասած և
անկէ դէպի Սամոս մեկնած են :
Բայց տաճիկ կառավարութիւնը
հոն իրենց թոյլատրած չը լինելով
որ ցամաք իննն , գացեր են Տը-
բապիզան , Օրտու , Կիրասոն նա-
ւահանգիստները , ոչ մէկ տեղ ալ
չեն ընդունուել : Վերջապէս կա-
ռավարութիւնը զանոնք խտրվէյի
շոգենալը գնելով զրկել է Ալեք-
սանտրիա , ուր այժմ թափառական
կը շրջին :

—Կովկասի հայոց ծխական վար-
ժարաններու գոյքերը դրաւուելու
խնդիրը քննելու համար կրթական
նախարարութեան խորհրդական
անգամ Պ. Մամոնդով թիֆլիս
հասած ու քննութեան սկսած է :

—Օգոստոսի սկիզբները Սապ-
զաւար քաղաքին (Պարսկաստան
մէջ սաստիկ երկրաշարժ տեղի
ունեցած ու տեւած է 6 օր . քա-
ղաքը իր շրջականերով ամբողջո-
վին կործանած է :

—Հաղարեան Ճեմարանի հիմ-
նական մատենադարանին մէջ գըտ-
նուած գրչադիր հնութիւններուն
մէջ 887 թուականին գրուած մա-
գաղաթեայ Աւետարանը տպագ-
րուել սկսած է նոյնութեամբ :

Այս Աւետարանը մեծ կարեւո-
րութիւն ունի իբրեւ հնագոյն հայ
գրչագիր և մանաւանդ Նոր կտա-
կարանի բնագրոյն քննական ու
սումնասիրութեանը համար :

—Ֆիլիպէէ մեզ կ'իմացնեն թէ
տեղւոյն ազգ. վարժարանի նոր-
ընտիր ուսուցիչները վարձուած են
ո և է կուսակցական ձգտումներէ
հեռի մնալու պայմանաւ , հակա-
ռակ պարագային Հոգաբարձու-
թիւնը իրաւունք ունի զանոնք
պաշտօնակն ընելու , առանց սպա-
նելու դպրոցական տարեշրջանի
լմնալուն :

—Անոնց համար ըսելիք չունիմ,
բայց հիմա՞յ . . . որքան փոխուած
են իրերը . Ռօւս կառավարութիւնը
այնքան առաջ գացած է որ մինչեւ
անգամ կաթողիկոսի անձնական նա-
մակները կը քացուին . . . :

Վահրամ չուզեց հաւատալ : Վարդա-
պետ կռահեց այդ բանը :

« Իր թերահաւատիւ . իմ օրովս եւ
նրկայս թեամբս պատահեցաւ այդ բա-
նը : Լոնտոնէն ապահովեալ նամակ մը
կիւս օր մը Հայրիկի հասցէին . նամա-
կը դեռ չը յանձնուած պրօկուրօրը ե-
կաւ ինձ ըսաւ որ յանուն թագաւոր-
կայսեր կուզէր վեհափառին նամակը
բանալ : Պրօկուրօրի կամքը Հայրիկին
խնայողի , անտարբեր մնաց :

« Թող բանայ , ըսաւ :

« Ինչ կըսէք , վեհափառ է՛ք , ա-
ռարկեցի ես . մինչեւ հիմա Ձարի կա-
ռավարութիւնը այդ տեսակ ոտնձգու-
թիւն մը չէ համարձակած փորձել հա-
յոց Հոգեւոր պետին դէմ . բողոքեցէ՛ք

հուլուական այցելութեան տակէն նոր
յեղափոխական կազմակերպութեան մը
հոտեր առնել կուզէր կուսակցութիւն
մը , թէ այդ պատճառաւ իր վարկը
ստորնաջնդու համար չըջաբերական-
ներ ցրուած էին մասնաճիւղի մը կող-
մէ :

« Վահրամ , ասկից տասնը հինգ տա-
րի առաջ երբ ինքզինքս կամաւոր նը-
շանակեցի ազգային դատին , անփորձ
էի այդ վիճակի մէջ ինձ սպասող ա-
մեն տեսակ անակընկալներու . հիմա
փորձառաբար կըսեմ որ ճշմարիտ հայ
յեղափոխականին թշնամին մէկ չէ , այլ
երկու . մէկը՝ արտաքին , Սուլթանը ,
երկրորդը՝ ներքին , խաչագողները : Ա-
նոնց երկուքն ալ ինծի հասնելիք
հարուածը տանելու համբերութիւնը
պիտի ունենամ :

Արցունքը սկսաւ կաթիլ երկուքին
ալ աչքերէն : Մկրտիչ վարդապետ Տէ-
րունեան , ազգային դատին այդ անուղ
ղակի զոհերէն մին , կարծես նախա-

զգացած էր իրեն սպառնացող ահաւոր
վտանգը օրեր առաջ :

Ամբողջ հայութիւնը ծանօթ է անոր
ունեցած եղբրական վախճանին : Բա-
ղաբճբէ վերադարձին յանկարծ րոցա-
ծաւալ հրդեհ մը մոխիր դարցուց Վառ-
նայի ազգային վարժարանը ուր կը
կենար Տէրունեանը : Տէրունեանը կը-
սնցնելով , ազգը ապագայ ազնիւ մշակ
մը կորսնցուց , բան մը որ ուրանալ
գոժաւար է ամեն դիտակից հայու :

Հրդեհի շարժառիթը դեռ անյայտ կը
մնայ . շատ բաներ խօսուեցաւ ան ա-
տեն բայց որոշ կարծիք մը չկրցաւ
յայտնել Վառնայի հայ հասարակու-
թեան հետ մամուլն ալ : Օր մը արեւը
կը յուսանք թէ ամեն բան կը պար-
գէ :

Տէրունեանի թաղումէն երեք օր
ետքը Վահրամ անհետացաւ Վառնայէն :
Անիկայ կերեւայ չկրցաւ հանդուրժել
անոր իրեն սրտին պատճառած վիշտին ,

Շ . Կառնարական
(Շարունակելի)

ԹԻՒՐԻՔԻԱ ՀԱՎԱՏԻՍԱԹԸ

Ի Ր Ա Տ Է

Ալաֆրանգա հոկտ. 11 թարիխ.
Լի Սթանպուլումն էլ վրոտա կազե-
թալարը աթիտէքի թէկէկրաֆը
գապուլ ու նէշը իթմիշէր աիր.
«Էրմէնիլէրին իսլահաթ մէսէ-
լէսին թէտզըգ իթմէք մէմուրի-
յէթի իլէ Երւսղէ քէօշկիւնտէ իճ.
թիմա իտէն գօմիսիօնը մախսու-
սըն աթիտէքի թէքիֆաթընը թասս
տիգ իտէն պիր իրատէ պու կիւն
սուտուր իթմի:

1. Շիւբհէլի շախարատան մաս-
տա Էրմէնիլէրին թիւրքիա վի-
լայէթիլէրինտէ կէզմէլէրինի մէնն
իտէն ֆէզկէլատէ թէտպիրլէրին
լազվ օլընմաս:

5. Էրմէնի իսթիլալը էսնասըն-
տա խարապ օլընան քիլիսէ, մէք-
թէպ վէ մանասթըրլարըն հիւքի-
մէթին մուսվէնէթի իլէ թամիր
հախօտ եէնիտէն ինչա օլընմար-
րը:

3. Գըրկընլար էսնասընտո էօլ-
տիրիլմիշ հախօտ տըշարը չըգա-
րըմը օլան Էրմէնի հիւքիւմէթի
մէմուրլարըն մոթլուպլարընըն էօ-
տէնմէսի:

4. Սթանպուլ ճիվարընտա՝ Էէ-
տի Գուլէտէ՝ պիր եէթիմհանէ
(սրբանոց) հաբըմասը:

5. Էրմէնիլէրտէն 54 քիշիյէ
աֆվ օլընմասը վէ իտամա մահ-
քիւմ օլան 24 Էրմէնիլէրին իտամ
ճէզալարընըն էպէտի մահպուսիյէ-
թէ թէպտիլի:

Իպու իրատէ Արթին բաշանըն
եէտի իլէ պուկիւն գօմիսիօնը
մախսուսա թէպլիղ օլընտը:

Էրմէնի Պատրիարքը իսթիֆա-
սընը կէրի ալաճագ. զիրա հէր
նէգատար իսլահաթըն իճրա օլը-
նաճաղը շիւբհէլի իտէն Էրմէնի-
լէրին թալէպլէրինէ իգթիֆա
վէրմէքտէ տիր (°):

— «Թան»ըն պէյանընս կէօրէ-
Օրմանհան իսթիֆասընը կէրի ալ-
մըշ տըր:

ՄԻԹԵՆԵՎՎԻՅԷ

— — —

Ինկիլթէրա «բարլամէնթօս»ը
աշըլտը. Մարքիզ Սալզպըրի
Թրանսվաուլ մէսէլէսինտէն տօլա-
յը շու մաալտա իզահաթ վէրտի.
«Թրանսվաուլ հիւքիւմէթի հիտ-
տէթլէստիրիճի թալէպլէրտէ պու-
լընարագ սուհըն իլալ օլմասը-
նա քէնտիսի սէպէպիյէթ վէրտի:
Շիւմտի մուհարէպէյի մէնն իթ-
մէք իշիւն պիր հօլ հօգ տըր, մա-
տէմքի ինկիլթէրայա հագալէթ
օլընտը. պիր Աֆրիգատա հաքի-
միյէթիմիզի վէ ումուս պէյազ միլ-
լէթլէրին միսուվի հուգուգընը
մուհաֆազա իտէճէկիլի:»

Սալզպըրիին պու մաալտա
վէրմիշ օլտըղը իզահաթ պիւ-
թիւն մէպուլարտան իթթիֆագը
արա իլէ գապուլ օլընտը: Մ-
Տիւօր առպիւթուս թէքիֆ իթ-
տի իտէտէ 54 սէսէ գարշը 322
սէսլէ թէքիֆի ըէտտ օլընտը:

Մարքիզ Սալզպըրիին վէ հար-
պիյէ նազըրընըն էվաուլարը տա:

Խի մուհարէպէյի իշթիւրաք իթ-
մէք իշիւն Աֆրիգայա կիտէյօր-
լար: Հարպիյէ պիւտճէսինին իւ-
զէրինէ 10 միլիօն իրա տահա
զամմ իթմէք թէքիֆ օլընիյօր:

Նաթալիտէքի Հոլանտա գօն-
սօլօսը թապաալարընա պի թա-
րաֆ պուլընմագ էմր իթմիշ տիր:

Ալմանիւլը պիր վարօր ճէնու-
պի Աֆրիգայա սիւհս կէօթիւր-
մէքտէ իքէն Բօրթ Սայիտտէ պիր
ինկիլիզ «քրուսղէօր»ընտան թու-
թուլուպ մէնն օլընմըշ օլտըղը
իսկէնտէրիէտէն պա թէլէկրաֆ
պիւտիրիյօլար:

— Սթանպուլումն ալընան պիր
թէլէկրաֆա պիւտէն, Սատրա-
զամ իսթիֆա իտէճէք, վէ անըն
եէրինէ 2էքի բաշա թալին օլը-
նաճագ ըմըշ:

— Սթանպուլումն ուն թիւհար-
լարը Անատօլումն նազլ իտէլէն
ուշլարըն պէհէր թօրպասընտ 30
ղըշ. մէսարիֆ իթմէկէ մէճպուր
օլտըղլարը իշիւն, Ամերիգատան
պէհէր թօրպայա հալընըղ 6 զըշ.
մէսարիֆ օլաճաղընտան, պէյին.
լէրինտէ պիր գուլմանհա թէլէքիլ
իտէրէք Ամերիգատան քիւլիյէթ-
լի ուն կէթիթտէքտէ իմիշլէր:

Իլք բարթի իքի վարօր ուն
կէթիթտմիշ օլմաղլէ Սթանպուլում
ֆիյաթ 5 զըշ. էնմիշ տիր:

— Իմրէյաթօր Սիւհէլմ թիւր-
քիայա սօն հօլընըղընտա գապուլ
իթմիկի զիգըլմէթ հէտիլէրէ
մուգապիլ կէլէնիլէրտէ քէնտի ֆօ-
թօլրաֆընը հօլմաղլ տը. պու-
ֆօթօլրաֆլարտան պիրինիտէ Պէ-
րուլ մասքիլինէ թախսիս իթ-
միշ տիր. Սուլթան վիլհէլմին պու
զիգըլմէթ (°): հէտիլէսինին ալ-
թընտա գալմըշ օլմամագ իշիւն
ֆրանսալը էն մէշհօր պիր ըէսսա-
մըն պէրկիւզարը օլան Երւսղէ
քէօշկիւնտէն էն գըլմէթտար պիւ-
րէսմիլին վիլհէլմէ հօլմաղլ տըր:
Իմրէյաթօր մէքիւր ըէսմի Երւ-
տըղտա կէօմիւշ օլմաղլէ հէյիտն
օլմըշ օլտըղընը տէֆաթլէ Սուլ-
թանա սէօլլէմիշ օլտըղընտան,
Սուլթան անըն արզուսընա իգ-
թիֆա վէրմիշ օլտը: Մէքիւր
ըէսմի Պէրլին օսմանը էլիշար պու
տէֆա իմրէյաթօրա թագտիմ
իթմիշ տիր:

— Մըրըրը Սայիտ բաշանըն
մախսուսը հաճի Մէհմէտ պէյ
պէլմէսի իլէ էտիրէնտէն գաշուպ
«Քօնկօ» ֆրանսըլ վարօրը իլէ
Մարսիլիայա վասըլ օլմուշ տըր:
Մէհմէտ պէյ ինկիլիզ թապա-
տը օլմաղլէ Մայսիլիտաքի ին-
կիլիզ գօնսօլսընա կիտուպ,
թիւրք հիւքիւմէթիւնտէն չէքտիկի
մէշաքէթի եէմէն թահթընտա ի-
ֆատէ իթմի: Գնսօլս պու րա-
բօրթըն պիր նուսիէսինին Լօրտ
Սալզպըրիյէ վէ պիրինի սթանպուլ
էլիշի Սըր Օ'Քօնօրա կէօնտէր-
տի: Հաճի Մէհմէտ՝ հաղընտա
թիւրքիատան Մարսիլիայա գաշ-
մըշ օլան կէնճ թիւրքիլէրտէն
Մէհմէտ Ալի՝ էֆէնտի իտնընա
քիւթիպ ալարագ Մարսիլիտան
Լօնտրայա հարէքէթ իթմի:

Հաճի Մէհմէտ պէյ Հիճազ,
վէ Սիւրիա թարաֆլարընը կէզուպ
իսլամլար իշիւն մուգատտէն օլան
մահէլլէրտէ թամիրաթ իշիւն 1500
լիրա սարֆ իթմիշ օլտըղընտան
հէրքէսին հիւանի թէվէտճուհընը
ճէլպ իթմիշ, պու սէպէպլէտէ մա:

հէլին Գայմազամըն հասէսըհար-
լըղր թահրիգ օլընմաղլէ անըն տ-
լէհիհէ Սուլթանա պիր րաբօրթ
հօլմաղլ: Սուլթանտան կէլէն
էմիր իւզէրինէ Հաճի Մէհմէտ
պէյի տէրտէսթ իթմէք իսթէմիշ-
լէր իտէտէ, ինկիլիզ թապատաը
պուլընտըղընտան Եւֆրատա թէս-
լիմ օլմամըշ տըր: Էվինի ապուգա-
յա ալմըշլար: Մահէլին հիւքիւ-
մէթի վէ Սուլթան պէյինտէ պա
թէլէկրաֆ մուխապէրաթտան սօն-
րա, Գօմիսէ՝ Սէրվէթ պէյին ըէֆէ-
գաթը իլէ Սթանպուլա կիտէր իտէ
նիշանլարա ու թալթիֆաթա նա-
յիլ օլընաճաղընա տայիր Սուլթան
տան էմիր կէլմիշ: Մէհմէտ պէյ
տախի, Սթանպուլա կիտէրէք,
տօղրու Երւսղէա թահսին պէյին
հուգուրընա չըգար: Թահսին ա-
նըն էլիտէն ինկիլիզ բասաբօր-
թընը ալուպ «պիր նաուսըլ իս-
լամ Օսմանըլ մէմուրը պուլընտըղը
հալտէ էճնէպի բասաբօրթընա իգ-
թիգաը գալմաղլ» տէյուպ երթար-
վէ պիւլախէրէ Մէհմէտ պէյի Պէ-
շիքթաշա հօլլայուպ Հասան բաշա
նըն վասըլթաը իլէ 40 կիւն գապ-
թիյէ գօլուշընտա գաբաթտըրըր:

(Տէվալի)

— 0 —

«Վէսէլօ» նամ էրմէնի թէ-
աթիօ գուլմանհաըն էվէլլէրի կիւն
չէհրիմիզէ վասըլ օլտու վէ պու-
աղշամ Անկէլ Սլալօֆըն սալօնըն-
տա օյնայաճագ տըր:

ՏԳԵՂ ՊԱՏԿԵՐՆԵՐ

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

99 հոկտ. 6

«Իրաւունք» թերթիգ այս տարւոյ
76 թւի մէջ Սուլին իր «Հերքում»
վերնագրով յօդուածին կցել էր մի ծա-
նօթութիւն, ուղղով հասարակութեա-
նը հասկացնել թէ ես էլ ապտակուած
եմ ինչ որ մի Արամ Մանափեանից
կոնցրէսի փորձի ժաւնաւակ:

Սուլին սխալ է լսել, կամ նրան իս-
բել են «իր արժանաւոր բարեկամնե-
րը»:

Այդ փորձի ժամանակ ես Արամ Մա-
նափեանի վրէժ զարկելով եւ ապտա-
կիւով դուրս էի անում սրահից, հրք
մարդիկ եկան նրան ձեռքից ազատե-
լու:

Սուլին թո՛ղ հասկանայ որ ես ինձ
ապտակով մարդին չնշակահար կանեմ
եւ իթէ Արամ Մանափեան ապրում է
այդ ապացոյց է որ ես նրանից ապտակ
չեմ կերեր, այլ ապտակողը ես եմ եւ
ղեւ:

Ասանդիւրա մէջ համոզվելու համար
թող Սուլին եւ իր բարկամիտը փոր-
ձեն ինձ «մատով» զրպչելու:

Այժմուսինից խոստանում եմ որ Սու-
լին եւ իր նմանների պէս դատարանի
չեմ դիմի:

Յուսով եմ որ երկուողս կը տպագրէք
անփոփոխ առանց ինձ ստիպելու տը-
պագրական օրէնքին դիմել:

ՎԱՐՊՈ

Խմբագրութիւն Իրաւունք լրագրոյ:

Իրաւունքի վերջին թուոյն մէջ Պ.
Սուլին իր Հերքում յօդուածի ծանօ-
թութեանը մէջ ինձ ալ ակնարկած էր
իբրեւ ապտակող քօնսէրի մը մէջ Պ.
Վարդօին:

Պ. Վարդօ զիս տեսնելով իր խմբա-
գրատան մէջ հագագործ Գալուստի եւ
զրաշարներու ներկայութեանը հարցուց
թէ «Իրաւ է թէ ստորագրութիւն տու-
ած ըլլամ Իրաւունքի խմբագրութեան
Պ. Վարդօն ապտակած ըլլալուս»: Ես
ալ ապտասխանեցի թէ այդ տեսակ
խնդրոյ մը համար ոչ ստորագրութիւն
տուած եմ եւ ոչ ալ տեղեկութիւն ու-
նիմ, աւելցուցի նաեւ թէ ստորա-
գրութիւն տուած չըլլալու Ձեզի ըս-

տորագրութիւն կուտամ, — շատ լա-
սաւ, եւ թուղթ մը ներկայացուց ին-
րուն վրայ գրեցի խմբագրութեան
ուղղուած նախորդ երկուողս: Պ. Վարդօ
չեղտելով կըսէր թէ «Ես քո վրայ նրա-
շուս չեմ բանեցնում, եթէ ուղղութեան
ապտակեցի գրէ, նոյնութեամբ պիտի
հրատարակեմ»: Ես առանց ապտակ
խնդրի պարզեցու ուղեցի վրան գրչի
անցնիլ, եւ ինքը հաւնելով երկուողս
րնդունեց Շարժումի մէջ եւս հրատա-
րակելու:

Իսկ այժմ տեղեկանալով թէ Պ. Վա-
րդօ ապտակի խնդիրը ծածկելու փաշ-
կանկատութիւնս չարաչար գործածելով
կը յայտարարէ թէ ինքը զիս ապտակ-
կած եւ գոնսէրի սրահէն դուրս փե-
տած ըլլայ, ինքզինքը արդարացնելու
եւ զիս բարոյապէս ստորնացնելու նշ-
պատակաւ: Այժմ բացէ ի բաց ես
կը յայտարարեմ թէ Պ. Վարդօ չեմ
գօնսէրի փորձին ժամանակ ապտակ
արդարացի պատճառի դուրս հանել
կուղէր զիս ի ներկայութեան 40-50
երկսեռ անձերու, եւ երբ անիլու հը-
րամանին չու գեցի հնազանդիլ, նախ
յարձակը ինք եղաւ ապտակ մը դա-
նելու ինձի, եւ ես ալ անոր փոխա-
նակեցի մէկ քանի ապսակներ գարնե-
լով: (**)

Այդ ապտակի դէպքին իրականու-
թիւնը այս է եւ Պ. Վարդօ պէտք չէ
որ իրողութիւնը խեղաթիւրելով ինք
զինքը բարձրացնելու համար տարբի
յայտարարութիւններ տայ ու աս ան-
իր քմահաճոյքին գոհէ:

Կը խնդրեմ որ ներկայս հաճիք նշ-
րատարակել:

8 հոկտ. 99 ԱՐԱՄ ՄԱՆԱՓԵԱՆ

Եթէ Պ. Վարդօ իսկապէս լա-
ւերանած է տպագրական օրէնքի տը-
րամադրութիւնը, ուրախ եմք, ուսել
փափաքելի է որ քիչ մըն ալ անկեղ-
ծութիւն փոխ առնէ, որպէսզի իր էն-
թրիքներուն զոհել փորձած անձնա-
րութեանց պատասխաններն ալ նոյ-
նութեամբ ընդունելով իր թերթին
մէջ մեղ անհաճոյ բեռն մը ազատա-
ւելլայ, որպիսին էր Պ. Սուլինի հը-
քմագիրը:

Այո՛, այդ տեսակ ըսի ըսանքի մեղ
եւ մեր ընթերցողաց անտանելի բեռ
մը կը նկատենք, երբ մանաւանդ խոն-
դիրը ծագում կառնէ Շարժումի նման
սարսաւ առնուած մրոտուածէ մը: Ուս-
տի վարդօ ապտակի փոխարէն գնդակ
(օգային) սպառնալու տեղ, քաջութիւն
թող ունենայ իրեն ուղղուած հերքում
ներն ալ Շարժումի նոյն սիւնակներու
մէջ ընդունելու: Բաւոյական աշխար-
հի մէջ գնդակահար ըլլալը հանրային
դատաստանին առջեւ պզտիկ ինչպի-
է, սր զփաղաղաբար այս սնդակ ալ
կրկին վարդօյ լիճակեցաւ: Եթէ ան-
դրպատական զարու մէջ ըլլայինք,
ինչպէս կը կարծէ վարդօ, իր սպառ-
նագած գնդակին բռնցի 2 հարուածով
պատասխանելու պաղարխունութիւնը
պիտի սնեւնար այս տողերը գրողը:

(*) Արդ, ինչ չանցաւ վարդօ ապ-
տակի գոհնիկ խնդիրը շարժումի տեղ
որուն զխաւոր գոհը — Եթէ Վարդօ
մարի այս բառը գործածել — հրապար-
կի վրայ ինք միայն, այժմ կարծէ՛ լուր
խմբագրի տնտեսու սալ իրեն, մե՛ղք:

ԽՄԲԱԳՐ.

ՕՓԵՆ ԵՐԼՈՎՏԻՎ

ՊԱՐԻՔ ԻՍՋԱՐ Ն. 462

ՀԱՅԱՍՏԱՆ

Այս պատգովը վերջերս
մեր տնօրինութեան տակ մտած
ըլլալով իր առջի վիճակը բոլոր-
ընդին բարեփոխուած է. յաճա-
խորդները ըստ ամենանի գոհ
կացուցանելու համար՝ հակառակ
համեստ գնելուն, մաքրութեան
մեծ հոգ ու խնամք կը տարուի:

10—2 ՅԱԿՈԲ ՄԻՆԱՍԵԱՆ

Отговорникъ Н. Драгулевъ
Печатница на Хр. Н. Войниковъ